կայր այսինքն մահտեսի գասպարի որդի խոճայ մովսէսն, սորայ տունն աւիրեցին, Ի զուուշն առին, հաճեցան զինքն սպանանել, հազիւ փախեաւ ընտանեօք գնաց քաղաքին մի կողմն թագեաւ, գնացին զօրպաներն տունն խորտակեցին շատ բարիքն տարան հաճեցան տունն այրել ոմանք թուրքերն ոչ թողին այրելոյ. և ինքն դեռ ևս է ի թագստեան հանդերձ ընդանեօք, և մեք քահանայքս ամենեին մէկ տնէն միւս տունն ոչ կարեմք գնալ...: Այլ և եթէ կամիք հարցանել զբան ինչ ի սահակ վարդապետէ որ մակ անուամբ կոչի ահագին. ձեզ յայտ է որ սայ եղև կաթուղիկոս, մեծաւ զարդիւք եկաւ ի կարին քաղաքն նստաւ բոլոր ամ մի, ոչ գնաց ի աթոռ իւր, ասելով եթէ անդ յէջմիածինն զոյ չամախեցի յակոբ վարդապետ որ նախ քան զիս գնացօղ կաթուղիկոսքն թիւնօք մահացոյց. ուստի և ես սակս յերկիւղի ոչ գնամ ի յաթոռն. երկոտասան վարդապետ առաքեաց յէջմիածինն նոյն յակոբ վարդապետն բերեց էրզրում իւր քովն. ասաց շատ կաթուղիկոս թիւնեցիր ինծ ալ այնպէս կէնէս. զայս ասաց ու մատանին մատանէն հանեց նորա մատն անցուց և օրհնեաց կաթուղիկոս յղեաց աթոռն, և ինքն անկաւ ի կաթուղիկոսութենէ. եղև ծաղր և նախատինք ի մէջ հայոց ազգին. նոյն յակոբ կաթուղիկոսն գնաց աթոռ նստաւ. տարին չլցուած էրէւանու խանն վէրուց բանտն դրեց. Ի քէսայ ըստակ տուքանք առաւ, այժմոյս այլվի յերկիւղի մէջ է: Դարձեալ պարսից յերկիրն այժմոյս այնպիսի բան չկայ որ գրեմ, խաղաղութիւն է այժմ, միայն թէ թագաւոր չունին. խաներն իւրաքանչիւրն իւր քաղաքն տիրել և նստել են: Լակզին մեր ախլցխայի բոլորն շրջապատեց. փաշան ազգեար առաւ վրան սաֆար գնաց նայինք: Էրզրումու ժէնութիւնն եթէ կամիք իմանալ, ցորէնին սումառն Է զուուշ. գարին Դ զուշ. միսն հօխէ Է փրկ. էգան միսն հօխէն Դ փրկ: Դարձեալ յայսմ ամի դէրպէքիրցի յուղափառ յանձ մի եկաւ ինծի քով. բերան առ բերան զանազան բաներ պատմեց որ հիացաք, ասելով եթէ անցեալ տարին որ յոյժ սղութիւն եղև դէրպէքիր, ցորէնին սումառն Ճ զուշի ծախուեցաւ, նայ այլ ԵՃ զուուշի տունն, Ճ զուուշի ծախէին Ա սումառմ ցորէնի կուտային, բազումք անօթի ջարդուեցան, և բազումք իւրեանց տղայքն մօրթեցին կերան, անձին մէկն ալ որ էր քրիստոնեայ, կանէ իւր կինն դէպի էրզրում գոգայ թէ երթամ հացի հասանիմ, կնոջ ծիծն ալ մէկ մատղաշ մանուկմ ունին եղել իւրեանց զաւակն, սոքայ քալելով գուգան մէկ յեապանի լեռամ տակն անօթի կու նուաղին, յետոյ այրն կնոջ կասէ. Օվ կին մեք դժոխքն երթալուն կերթանք էկէ այս մեր մանուկն մօրթենք ուտեմք. կինն գուլայ կաղա|ղա|կէ այրն չի անսալ կնոջ լացին. յետոյ կինն կասէ. Մի յառաջի յաջացս մօրթել. համբերեայ ես փախչիմ հեռու քարի յետև անցնիմ որ տղայիս ձայն չլսեմ. կերթայ քարի յետև կանցնի մէմալ նայի որ սարէ ի վայր մէկ վայրի այծմ վայելով վաղվաղակի հասնի յայս կնոջ քովն. կինն շուտով այծուն գլխէն կու բռնէ տանի էրկան կու տայ տղան կազատէ. այծն մօրթեն կուտեն. այս հրաշքն ալ այսպէս եղև: Այժմոյս նոյն քաղաքն ժէնութիւն է Աստուծոյ գոհութիւն: Հայր իմ հէրու յղեցի Ա արծաթապատ աւետարամ, որ բոլոր դապլամայ արծաթ էր ամենեին բաց տեղ չունիր. ի միասին ևս մէկ մեծ հին գիրքմ...:

Ցամի տեառն 1760
Մայիսի ԺԳ

Նուաստ ծառայ
Տէր Յակոբ տէր Ղազարեան
անարժան քհնյ. ի խորջրոյ
գրուեցաւ գիրս ի Կարին քաղաքի

Դարձեալ ծանիք. Հալպայ մինչև որ գայ հասանի Ղարս աճմին սինօռն, պաշիպոշ Լաւանան պաշարեց, յերկիր յամենայն աւիրեց իբր չէնլիք չթողեց, բազումք գարշելի բաներ էրաւ, մանաւանդ բասէնու յերկիրն: Ոչ փաշայ կայ ոչ դատաւոր:

Այս թուխթն դեռ ևս չէի ծալել և զմռել. ախլցխայու մարդ էհաս ասդ էրզրում, ասելով թէ լակզին մեծապէս պաշարեց և սխալթ էրաւ քաղաքին, միայն մնաց Աստուծոյ: